



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ՀՀ, Երևան, 0010, Զաքյան, 7-2

(+374 10) 600 704

23 ապրիլի 2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Հանրային փաստաթուղթ

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչ՝ ի.գ.թ. Առնուղ Վարդանյանի* որպես *amicus curiae* գրավոր դիտարկումները, Սուրեն Անտոնյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 144-րդ հոդվածի 1.1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով

* Սույն մասնագիտական կարծիքը ներկայացվում է ՀՀ փաստաբանների պալատի հարցման հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Գործի դատավարական նախապատմությունը.....	3
II. ՀՀ Սահմանադրական դատարանում վիճարկվող իրավադրույթները.	4
III. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիմքերն ու հիմնավորումները.....	7
IV. Գրավոր դիտարկումներ վիճարկվող իրավադրույթների սահմանադրականության վերաբերյալ.....	10
Ա) Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի վերաբերյալ միջազգայնորեն ընդունված ընդհանուր մոտեցումները.....	12
Բ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջազգային փորձը.....	14
Գ) Դատավորին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով արտասահմանյան երկրների սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումները.....	17
Դ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ դիտարկելու ՀՀ օրենսդրի մոտեցման և իրավական որոշակիության սահմանադրական երաշխիքների համահունչությունը.....	20
Ե) Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման առիթի կանխատեսելիության երաշխիքի և այն ամրագրող օրենքը հետադարձ ուժով կիրառելու հնարավորության միջազգային չափորոշիչները.	25
Զ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթի կիրառելիությունը հետադարձ ուժով (ex post facto).	27
V. Եզրահանգումներ.....	31

I. **Գործի դատավարական նախապատմությունը.**

1. ՀՀ արդարադատության նախարարի՝ 2022 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 108-Ա որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանի (այսուհետ՝ նաև Դիմող) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ որպես առիթ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով 2015 թվականի դեկտեմբերի 3-ին կայացված վճիռը, գանգատ թիվ 22343/08:
2. ՀՀ արդարադատության նախարարի՝ 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 111-Ա որոշմամբ միջնորդություն է ներկայացվել ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ (այսուհետ՝ նաև ԲԴԽ)՝ Դիմողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:
3. ԲԴԽ-ի՝ 2023 թվականի հունվարի 26-ի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշմամբ Դիմողի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցվել են:
4. Դիմողի ներկայացուցիչ Է.Ամիրխանյանը 2023 թվականի հուլիսի 28-ին դիմում է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան՝ վիճարկելով դիմողի նկատմամբ կիրառված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և 144-րդ հոդվածի 1.1-ին մասի սահմանադրականությունը:
5. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 17-ի թիվ ՍԴԴԿՈ-31 որոշմամբ Սահմանադրական դատարանի դատական կազմի կողմից գործն ընդունվել է քննության:

II. ՀՀ Սահմանադրական դատարանում վիճարկվող իրավադրույթները.

6. 2020 թվականի մարտի 25-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է և 2020 թվականի մայիսի 2-ից ուժի մեջ է մտել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-197-Ն ՀՀ սահմանադրական օրենքը¹, որով նույն օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. *«Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ (...) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հարկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը»:*
7. Նույն օրենքով խմբագրված՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. *«Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ (...) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ»:*
8. Նույն օրենքով խմբագրված՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Էական կարգապահական խախտում է՝
- 1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության

¹ Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=141490>, վերջին այց՝ 22 ապրիլի 2024թ.:

վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակազրկման»:

9. Նույն օրենքի անցումային դրույթների 19-րդ կետի համաձայն՝ «Սույն օրենքով լրացվող՝ 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային տրանսիտի սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա»:
10. 2022 թվականի հուլիսի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է և 2022 թվականի օգոստոսի 13-ից ուժի մեջ է մտել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-333-Ն ՀՀ սահմանադրական օրենքը², որով նույն օրենքի 144-րդ հոդվածը լրացվել է 1.1-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված [կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթ հարուցելու] ժամկետները չեն փարածվում սույն օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված առիթով հարուցվող կարգապահական վարույթների վրա: Եթե արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտումը հայտնաբերվել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտի ուսումնասիրության արդյունքով, ապա այդ խախտման հիմքով կարգապահական վարույթ չի

² Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=166822>, վերջին այց՝ 22 ապրիլի 2024թ.:

կարող հարուցվել, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտն ուժի մեջ մտնելուց հետո անցել է 15 տարի»:

11. Նույն օրենքի անցումային դրույթների 2-րդ կետի համաձայն՝ «Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտումներով, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերի ուսումնասիրության արդյունքով հայտնաբերված խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթով էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով»:

12. ԲԴԽ-ի՝ 2023 թվականի հունվարի 26-ի թիվ ԲԴԽ-1-Ո-Կ-4 որոշմամբ Դիմողի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցվելիս, հիմք է ընդունվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի գործով 2015 թվականի դեկտեմբերի 3-ին կայացված վճռով արտահայտված իրավական դիրքորոշումները և արձանագրվել, որ «Դատարանն իր կողմից թույլ տրված դատավարական խախտումների հետ միաժամանակ, այն է՝ առանց ժամկետի սահմանման վերադարձված վճռաբեկ բողոքի և օրինական ուժի

մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության պայմաններում վերստին ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելով և քաղաքացիական վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտը բեկանելով թույլ է տվել նաև *res judicata* (դատարանի վճիռները վերջնական լինելու) սկզբունքի, ինչպես նաև անձի՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ և 31-րդ հոդվածներով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված արդար դատաքննության և սեփականության իրավունքների խախտումներ»³:

III. Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիմքերն ու հիմնավորումները.

13. Ներկայացված դիմումում Դիմողի ներկայացուցիչը նշել է, որ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ինչպես ինքնին, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը և 144-րդ հոդվածի 1.1-ին մասը, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, հակասում են ՀՀ Սահմանադրության 5-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին:
14. Հղում կատարելով ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և նույն օրենքի 144-րդ հոդվածի 1.1-րդ մասին, թիվ ՀՕ-197-Ն օրենքի անցումային դրույթների 19-րդ կետին, Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ որպես կարգապահական վարույթ հարուցելու առիթ կարող էր հանդիսանալ միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն վճիռը, որը կայացվել է նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, այն է՝ 2020 թվականի մայիսի 2-ից հետո: Նման պայմաններում,

³ Տե՛ս մանրամասն հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=174295>, վերջին այց՝ 22 ապրիլի 2024թ.:

Դիմողի ներկայացուցիչը գտել է, որ օրենքի նորմը հակասում է Սահմանադրության հետադարձ ուժի կիրառումն արգելող դրույթին, քանի որ այն սահմանում է կարգապահական վարույթի հարուցման նոր առիթ, այն տարածելով նաև այն կարգապահական խախտումների նկատմամբ, որոնք կատարվել են մինչև այդ առիթը սահմանող օրենքի ընդունումը: Բացի այդ, Դիմողի ներկայացուցիչն ընդգծել է, որ նշված նորմը հակասում է Սահմանադրությանը նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությանը, քանի որ չնայած այն հանգամանքի, որ օրենքի համաձայն՝ կարգապահական վարույթի հարուցելու առիթ կարող է ծառայել միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն վճիռը, որը կայացվել է նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, այնուամենայնիվ սույն գործով օրենքը կիրառվել է դրանից առաջ՝ 2015 թվականին կայացված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա:

15. Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ սույն գործով կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքը կատարվել է 2007 թվականի հոկտեմբերի 1-ին, երբ գործող օրենսդրությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը չի հանդիսացել կարգապահական վարույթ հարուցելու առիթ: Ուստի, հետադարձ ուժի կիրառման սահմանադրական արգելքի, այդ թվում՝ իրավական որոշակիության և լեգիտիմ ակնկալիքի տեսանկյունից, դատավորը չէր կարող ենթադրել, որ հետագայում կայացվելիք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը կարող էր առիթ հանդիսանալ նրա նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար:

16. Միաժամանակ, Դիմողի ներկայացուցիչն ընդգծել է, որ ՀՀ դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1.1-րդ մասը և 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը հակասում են ՀՀ Սահմանադրությանը՝ ԲԴԽ-ի կողմից տրված մեկնաբանությամբ: Ներկայացուցիչը հայտնել է, որ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված՝ 15 տարվա վաղեմության ժամկետը վերաբերվել է

միայն կարգապահական վարույթ հարուցելու ժամկետին, որը պետք է հաշվարկվեր ՀՕ-197-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց՝ 2020 թվականի մայիսի 2-ից հետո ընկած ժամանակատվածում կայացված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների համար:

17. Ավելին, Դիմողի ներկայացուցիչը հայտնել է, որ մինչև օրենսդրական փոփոխությունների ընդունումը, ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու համար սահմանված է եղել առավելագույնը մինչև ութ տարվա ժամկետ, մինչդեռ տվյալ դեպքում, իրավաչափ է համարվել 2007 թվականից հետո՝ ավելի քան 15 տարի անց կարգապահական վարույթի հարուցումը:

18. Հղում կատարելով նշված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի արտահայտած մտահոգություններին, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժնի բացասական կարծիքին, Դիմողի ներկայացուցիչը նշել է, որ թիվ ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն օրենքները դատավոր Սուրեն Անտոնյանի գործով կիրառելի չէին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2015 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը չէր կարող հիմք հանդիսանալ նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, ԲԽԴ կողմից տրված մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 73-րդ և 79-րդ հոդվածներին:

19. Վերոգրյալի հետ մեկտեղ, ՀՀ դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և նույն հոդվածի 6-րդ հոդվածի 1-ին կետի սահմանադրականության շրջանակներում Դիմողի ներկայացուցիչն ընդգծել է, որ ԲԴԽ-ի կողմից պատշաճ չի գնահատվել այն հանգամանքը, որ մարդու իրավունքները խախտող կամ դատական իշխանությունը հեղինակազրկող է որակվել մի արարք, որը ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից 2008 թվականի մայիսի 27-ի թիվ

ՍԴՈ-754 որոշմամբ գնահատվել է որպես իրավաչափ: Արդյունքում, ստացվել է, որ ԲԴԽ-ն կարող է ոչ իրավաչափ և դատական իշխանությունը հեղինակազրկող ճանաչել դատարանի որդեգրած այնպիսի իրավակիրառ պրակտիկան, որը սահմանադրական արդարադատություն իրականացնող և Սահմանադրության գերակայությունն ապահովող ՀՀ Սահմանադրական դատարանը ճանաչել է իրավաչափ: Դիմողի ներկայացուցչի պնդմամբ, Խորհրդի նման մեկնաբանությունը հակասում է ՀՀ Սահմանադրության 5-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին, խախտում դատավորի՝ ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածով երաշխավորված՝ հանրային ծառայություն անցնելու իրավունքը, 57-րդ հոդվածով երաշխավորված աշխատանքային իրավունքները, Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը:

20. Դիմողի ներկայացուցիչը ՀՀ Սահմանադրական դատարանից խնդրել է ՀՀ դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ինչպես ինքնին, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ինչպես նաև ՀՀ դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 142-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը և 144-րդ հոդվածի 1.1-ին մասը, իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 5-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

IV. Գրավոր դիտարկումներ վիճարկվող իրավադրույթների սահմանադրականության վերաբերյալ.

21. Սույն գործով վիճարկվող իրավադրույթների և դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատման կապակցությամբ ներկայացվող գրավոր դիտարկումներն ընդհանուր առմամբ հանգում են հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք թիվ ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն օրենքները, խնդրո առարկա համատեքստում, ՀՀ Սահմանադրության պահանջների տեսանկյունից բավարար իրավական երաշխիքներ են նախատեսում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար,
- արդյո՞ք թիվ ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն օրենքների վերաբերյալ, խնդրո առարկա համատեքստում, ԲԴԽ-ի կողմից տրված մեկնաբանությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավական երաշխիքներին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար:

22. Նշված հարցերի պատասխանն անհրաժեշտ է դարձնում ներքոշարադրյալ հանգամանքների պարզումը.

- Որո՞նք են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի վերաբերյալ միջազգայնորեն ընդունված ընդհանուր մոտեցումները,
- Ինչպիսի՞ միջազգային փորձ է առկա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս,
- Արդյո՞ք առկա են դատավորին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով արտասահմանյան երկրների սահմանադրական դատարանների որոշումներ,
- Արդյո՞ք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ դիտարկելու ՀՀ օրենսդրի մոտեցումը համահունչ է իրավական որոշակիության սահմանադրական երաշխիքներին,

- Ինչպիսի՞ միջազգային չափորոշիչներ են նախատեսված դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթի կանխատեսելիության երաշխիքի և այն ամրագրող օրենքը հետադարձ ուժով կիրառելու հնարավորության վերաբերյալ,
- Արդյո՞ք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթի հետադարձ ուժով կիրառելիությունը համապատասխանում է սահմանադրական երաշխիքներին:

Ա) Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի վերաբերյալ միջազգայնորեն ընդունված ընդհանուր մոտեցումները.

23. Թեև Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը նշել է, որ յուրաքանչյուր պետություն ինքը պետք է օրենքով սահմանի, թե որ դեպքերում դատավորի նկատմամբ կարող է կարգապահական վարույթ հարուցվել⁴, սակայն նշվածը պետք է համապատասխանի որոշակի չափորոշիչների: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի վերաբերյալ միջազգայնորեն ընդունված ընդհանուր մոտեցումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, դրանք հիմնված են ինչպես իրավունքի ընդհանուր սկզբունքների, այնպես էլ դատավորի գործունեության հիմնարար երաշխիքների վրա:

24. Այսպես, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Վենետիկի հանձնաժողով)

⁴ Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ, կարծիք թիվ 3(2022), Դատավորների մասնագիտական վարվելակերպը, մասնավորապես՝ էթիկան, դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծը և անաչառությունը կանոնակարգող սկզբունքների և կանոնների մասին:

դիրքորոշումների համաձայն՝ դատավորների նկատմամբ օրենքի գերակայության վրա հիմնված կարգապահական վարույթը պետք է համապատասխանի որոշակի հիմնական սկզբունքներին, որոնք ներառում են հետևյալը. պատասխանատվությունը պետք է հետևի օրենքով հստակ սահմանված պարտականությունների խախտմանը. պետք է լինի արդար դատավարություն՝ կողմերի լիարժեք լսումներով և դատավորի ներկայացուցչությամբ, օրենքը պետք է սահմանի կիրառման ենթակա սանկցիաների սանդղակը, սանկցիաների կիրառումը պետք է համապատասխանի համաչափության սկզբունքին, պետք է լինի ավելի բարձր դատական մարմին բողոքարկելու իրավունք⁵:

25. Միաժամանակ, կարգապահական վարույթը պետք է վերաբերի կոպիտ և աններելի մասնագիտական սխալ վարքագծին, բայց երբեք չպետք է տարածվի օրենքի իրավական մեկնաբանության տարբերությունների կամ դատական սխալների վրա⁶:

26. Վերոգրյալի հետ մեկտեղ, դատավորի կողմից տրված իրավական մեկնաբանությունը, ի հակառակ սահմանված նախադեպային իրավունքի, ինքնին չպետք է դառնա կարգապահական տույժի կիրառման հիմք, եթե դա արված չէ անբարեխիղճ, դատավարության ընթացքում կողմին վնաս պատճառելու դիտավորությամբ կամ կոպիտ անփութության արդյունքում: Թեև ստորադաս դատարանների դատավորները, ընդհանուր առմամբ, պետք է հետևեն հաստատված նախադեպային իրավունքին, սակայն նրանց չպետք է արգելվի վիճարկել այն, եթե նրանք իրենց կարծիքով ճիշտ են համարում դա անել⁷:

⁵ St'u CDL-AD(2016)009, Final Opinion on the revised draft constitutional amendments on the Judiciary (15 January 2016) of Albania, §34

⁶ St'u CDL-AD(2011)012, Joint Opinion on the constitutional law on the judicial system and status of judges of Kazakhstan by the Venice Commission and OSCE/ODIHR, §60:

⁷ St'u CDL-AD(2014)006, Joint opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law of the Council of Europe, and of the

Բ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջազգային փորձը.

27. Դատավորին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված դատական ակտի հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև դատավորիներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի սահմանման պրակտիկան էապես տարբերվում է երկրից երկիր⁸, սակայն մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա ներպետական դատական ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հատուկ կարգավորում ըստ էության նախատեսված է եղել սահմանափակ թվով երկրներում:

28. Այսպես, Մոլդովայի Հանրապետության խորհրդարանը 2010 թվականի հուլիսի 8-ին ընդունել է «Որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 152 օրենքը⁹: Թիվ 152 օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Դատավորների կարգավիճակի մասին» 1995 թվականի հուլիսի 20-ի թիվ

OSCE Office for Democratic Institutions and Human Rights (OSCE/ODIHR) on the draft law on disciplinary liability of judges of the Republic of Moldova, §22.

⁸ Տե՛ս CDL-AD(2014)018, Joint opinion of the Venice Commission and OSCE/ODIHR on the draft amendments to the legal framework on the disciplinary responsibility of judges in the Kyrgyz Republic, §23:

⁹ Տե՛ս Republica Moldova Curtea Constituțională, Постановление о контроле конституционности положений ст.22 ч.(1) п.р) Закона №544-XIII от 20 июля 1995 года «О статусе судьи» в редакции Закона №152 от 8 июля 2010 года «О внесении изменений и дополнений в некоторые законодательные акты», աղբյուրը՝ codices.coe.int:

544-XIII օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում՝ «Կարգապահական խախտումներ» վերտառությամբ: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ կարգապահական խախտում է համարվում այն դատական ակտի ընդունումը, որը հետագայում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ճանաչվել է որպես մարդու հիմնարար իրավունքների և ազատությունները խախտող¹⁰:

29. Բացի այդ, Ուկրաինայի Հանրապետության «Դատական իշխանության և դատավորների մասին» օրենքի 109-րդ հոդվածի 12-րդ կետում նախատեսվել է, որ եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշմամբ հայտնաբերվել են փաստեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու համար, ապա [կարգապահական պատասխանատվության ենթարկվելու հիմքի] ժամկետը հաշվարկվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը վերջնական դառնալու պահից¹¹:

30. Թեև ինչպես ստորև կներկայացվի, Մոլդովայում ընդունված օրենքը հետագայում Մոլդովայի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է Մոլդովայի Սահմանադրությանը հակասող և անվավեր, հարկ է նաև ընդծել, որ ՄԱԿ-ի դատավորների և իրավաբանների անկախության հարցով Հատուկ զեկուցողի կողմից մշտապես ընդգծվել է, որ միջազգային և տարածաշրջանային չափորոշիչները ճանաչում են, որ կարգապահական պատասխանատվության ընթացակարգ չի կարող նախաձեռնվել դատավորի նկատմամբ՝ նրա որոշումների բովանդակության, իրավական մեկնաբանության տարբերությունների կամ դատական

¹⁰ Ibid.

¹¹ Տե՛ս օրենքը հասանելի հետևյալ հղմամբ՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2021\)080-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2021)080-e), վերջինս այց՝ 24 ապրիլի 2024թ.:

սխալների հետևանքով¹²: Միաժամանակ, նշվել է, որ դատական սխալները կարող են հիմք հանդիսանալ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար միայն այն դեպքում, երբ դրանք կատարվել են անբարեխիղճ, դատավարության ընթացքում կողմին օգուտ կամ վնաս հասցնելու դիտավորությամբ կամ կոպիտ անփութության հետևանքով¹³:

31. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ CM/Rec(2010)12 հանձնարարականի համաձայն ևս դատավորները չպետք է ենթարկվեն քրեական կամ կարգապահական պատասխանատվության՝ օրենքը մեկնաբանելու, փաստերը գնահատելու կամ գործերը պարզելու համատեքստում ապացույցները կշռադատելու համար, բացառությամբ չարամիտ դիտավորության և կոպիտ անփութության դեպքերի¹⁴: Այդ պատճառով էլ սահմանվում է, որ դատավորները չպետք է պատասխանատվության ենթարկվեն այն որոշումների համար, որոնք բեկանվում կամ փոփոխվում են բողոքարկման արդյունքում¹⁵:
32. Ավելին, Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ դատավորի իրավական մեկնաբանությունը, որը կարող է չհամապատասխանել սահմանված նախադեպային իրավունքին, ինքնին չպետք է դառնա կարգապահական տույժեր կիրառելու հիմք, բացառությամբ այն դեպքերի,

¹² Տե՛ս UN General Assembly, report of the Special Rapporteur on the independence of judges and lawyer, A/75/172, 17 July 2020, §21:

¹³ Ibid.

¹⁴ Տե՛ս Recommendation CM/Rec(2010)12 of the Committee of Ministers to Member States on Judges: Independence, Efficiency and Responsibilities (adopted by the Committee of Ministers on 17 November 2010 at the 1098th meeting of the Ministers' Deputies), §66:

¹⁵ Ibid §70.

երբ դա արվում է անբարեխիղճ՝ դատավարության կողմին օգուտ կամ վնաս հասցնելու նպատակով կամ կոպիտ անփութության արդյունքում¹⁶:

Գ) Դատավորին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով արտասահմանյան երկրների սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումները.

33. Արտասահմանյան երկրների սահմանադրական դատարանների որոշումների տեղեկատվական համակարգերում կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մոլդովայի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի հունիսի 7-ի թիվ MDA-2011-2-002 որոշման շրջանակներում քննարկվել է վերը հիշատակված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցը՝ Արդարադատության գերագույն դատարանի դիմումի հիման վրա¹⁷: Նշված գործով դիմումում նշվել է, որ վիճարկվող նորմը խախտում է գործող դատավորի անկախության, անաչառության և անփոփոխելիության սահմանադրական սկզբունքները:

34. Սահմանադրական դատարանը նշել է, որ Սահմանադրությունը պաշտպանում է անձի անկախ և անաչառ դատական քննության իրավունքը: Այս իրավունքը ոչ միայն հիմնարար, այլև արդյունավետ և ամբողջական դատական պաշտպանություն է երաշխավորում, որը կարելի է ձեռք բերել

¹⁶ St'u Republic of Moldova - Amicus Curia Brief of the European Commission for Democracy through Law of the Council of Europe ("Venice Commission") for the Constitutional Court on the criminal liability of judges, CDL-AD(2017)002, 13 March 2017, §33:

¹⁷ St'u Republica Moldova Curtea Constituțională, Постановление о контроле конституционности положений ст.22 ч.(1) п.р) Закона №544-XIII от 20 июля 1995 года «О статусе судьи» в редакции Закона №152 от 8 июля 2010 года «О внесении изменений и дополнений в некоторые законодательные акты», աղբյուրը՝ codices.coe.int:

միայն իրապես անկախ դատական համակարգի պայմաններում, և որն իրականացվում է հենց դատարանի դատավորի կողմից:

35. Դատարանն ընդձեռն է, որ իրավական պետությունում արդարադատություն իրականացնելիս Սահմանադրության 116.1-ին հոդվածը երաշխավորում է դատավորի անկախությունը և անաշառությունը: Դատավորը պաշտպանված է անփոփոխելիությամբ՝ պայմանով, որ նա կատարի իր մասնագիտական պարտականությունները և պահպանի էթիկայի վարքագծի կանոնները: Դատավորը կարող է ենթարկվել կարգապահական տույժի, եթե նա խախտի այս կանոնները:

36. Անդրադառնալով խնդրո առարկա դեպքում, դատավորին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին, Սահմանադրական դատարանը նշել է, որ գործի ներկայացումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում պահանջ է ընդդեմ պետության: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը միջամտում է, երբ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը չի ապահովվել, ինչպես նախատեսված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով կամ իրավիճակներում, երբ ներպետական դատարանների կողմից թույլ տրված սխալները կարող են ենթադրել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների խախտում: Սուբսիդիարության սկզբունքին համապատասխան՝ եվրոպական դատարանը չի կարող փոխարինել ազգային դատարաններին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն աջակցում է այն մոտեցմանը, որ ներպետական օրենքի մեկնաբանությունն ազգային դատարանների առաջնային խնդիրն է, սակայն այդպիսի մեկնաբանությունը չպետք է հակասի մարդու հիմնարար իրավունքների պահպանմանը:

37. Սահմանադրական դատարանն ընդձեռն է, որ վիճարկվող իրավական նորմի իմաստով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական

ակտով Մոլդովայի Հանրապետության պարտությունը ենթադրում է դատավորների կարգապահական պատասխանատվություն: Դատարանն ընդգծել է, որ դատավորները պետք է օգտվեն անձեռնմխելիությունից արդարադատություն իրականացնելիս: Նման անձեռնմխելիությունը կխաթարվի, եթե դատավորի կայացրած դատական ակտը [Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից] չեղարկելու կամ փոփոխելու որոշումը վճռորոշ պատճառ դառնա դատավորի նկատմամբ սանկցիաներ կիրառելու և նրան պատասխանատվության ենթարկելու այն կարծիքի համար, որն արտահայտվել է նրա արդարադատության իրականացման ընթացքում որոշում կայացնելու միջոցով:

38. Այսպիսով, դատարանն արձանագրել է, որ դատավորները չեն կարող հարկադրվել սանկցիայի սպառնալիքի ներքո իրականացնել իրենց լիազորությունները, քանի որ դա կարող է ազդել նրանց վերջնական որոշման վրա: Իրենց պարտականությունները կատարելիս դատավորները պետք է ունենան անխոչընդոտ ազատություն՝ գործերը անաչառ լուծելու՝ օրենքին համապատասխան և փաստերի իրենց գնահատմամբ: Արդարադատության ցանկացած սխալ պետք է հայտնաբերվի և ամրագրվի որպես առաջնահերթություն՝ արդյունավետ պաշտպանության միջոցներով:

39. Դատարանն ընդգծել է, որ վիճարկվող իրավական դրույթն իր բնույթով պարտադիր է և ենթադրում է դատավորի կամ դատավորների կազմի կարգապահական պատասխանատվություն, եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետագայում գտնի, որ դատարանի դատական ակտը խախտում է մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները: Սահմանադրական դատարանը գտել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի էվոլյուցիոն և դինամիկ մոտեցման լույսի ներքո՝ դատավորների «մեխանիկական» հաշվետվողականությունն անթույլատրելի է նման դեպքերում՝ առանց կարգապահական խախտման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը ցույց տալու:

40. Դատարանը եզրակացրել է, որ դատավորների կարգապահական պատասխանատվությունը՝ հիմնված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա, որտեղ պարտվում է Մոլդովայի Հանրապետությունը որպես պետություն՝ առանց ապացույցների, որ օրենքը խախտվել է դատավորի կողմից դիտավորյալ կամ կոպիտ անփութության արդյունքում, անթույլատրելի միջամտություն է դատավորի անկախության, անաչառության և անփոփոխելիության սկզբունքներին: Ուստի, Սահմանադրական դատարանը գտել է, որ «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի վիճարկվող դրույթը հակասում է Մոլդովայի Սահմանադրության 6-րդ, 114-րդ և 116.1-րդ հոդվածներին:

41. Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի սահմանադրականության առումով, հարկ է նաև վկայակոչել Ուկրաինայի Սահմանադրական դատարանի՝ 2020 թվականի մարտի 11-ի որոշումը, որի շրջանակներում դատարանը նշել է, որ դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվությունը պետք է իրականացվի ողջամիտ ժամկետներում և այնպիսի ընթացակարգերի միջոցով, որոնք լիովին երաշխավորում են դատավորի պաշտպանությունը¹⁸:

Դ) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը որպես դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ դիտարկելու ՀՀ օրենսդրի մոտեցման և իրավական որոշակիության սահմանադրական երաշխիքների համահունչությունը.

42. Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի սահմանադրականության շրջանակներում, գնահատելով օրենսդրի կողմից որդեգրված մոտեցումը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտը որպես

¹⁸ Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://codices.coe.int/codices/results/precis/9BB01E40-E837-47B8-3E62-08DC225DC81B>, վերջին այց՝ վերջին այց՝ 24 ապրիլի 2024թ.:

դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հատուկ (ինքնուրույն) առիթ դիտարկելու առումով, հարկ է նկատել, որ այդպիսի մոտեցումն ինքնին խնդրահարույց է սույն կարծիքում վկայակոչված միջազգային փափուկ իրավունքի աղբյուրների և իրավական որոշակիության սահմանադրական երաշխիքների տեսանկյունից:

43. Թեև ի համեմատություն Մոլդովայի Հանրապետության՝ հակասահմանադրական ճանաչված օրենսդրական կարգավորման, Հայաստանի Հանրապետության օրենսդրի կողմից տրված ձևակերպումը, դատավորի սուբյեկտիվ կողմի գնահատման առումով, թողնում է որոշակի հայեցողություն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած դատական ակտի հիման վրա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և հետագայում կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, սակայն կարգավորումը որոշակիություն չի պարունակում դատավորների նկատմամբ նշված առիթով կամայական կարգապահական վարույթ հարուցելու հնարավորությունը բացառելու համար: Այլ կերպ, խնդրո առարկա առիթով կարգապահական վարույթի հարուցման և հետագայում նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգը չունի հստակ հակակշիռների համակարգ՝ դատավորների անկախության, անփոփոխելիության և գործառութային անձեռնմխելիության նկատմամբ ապօրինի միջամտությունը զսպելու համար:

44. Բացի այդ, ընդունված օրենքի շրջանակներում հաշվի առնված չէ նաև Հայաստանյան դատական համակարգի եռաստիճան կառուցվածը և հստակեցված չէ, թե ինչպես պետք է կատարվի դատավորի՝ թույլ տրված կարգապահական խախտման անհատականացումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս: Այս առումով,

հատկանշական է նաև վկայակոչել Վենետիկի հանձնաժողովի այն դիտարկումը, որ անհատապես դատավորները չեն կարող կրել պատասխանատվություն ամբողջ դատական համակարգի արդյունավետության համար¹⁹: Այլ կերպ, եթե թույլ տրված դատական սխալը չի ուղղվել եռաստիճան դատական համակարգով անցնելուց հետո, ապա ընդունելի չէ այդ դատական սխալի համար կոնկրետ դատավորին պատասխանատվության ենթարկելը:

45. Ավելին, հարկ է նկատել, որ միջազգայնորեն ճանաչված և սույն կարծիքում վկայակոչված այն սկզբունքը, որ դատավորը չպետք է ենթարկվի կարգապահական պատասխանատվության իր կողմից կայացված դատական ակտի և տրված մեկնաբանության համար՝ անկախ այդ դատական ակտի՝ վերադաս դատական ատյանի կողմից բեկանված լինելու հանգամանքից, պետք է կիրառելի լինի ինչպես ներպետական, այնպես էլ վերպետական միջազգային դատարանների կամ քվազի-դատական ֆունկցիա ունեցող միջազգային մարմինների կողմից ներպետական դատական ակտերի իրավաչափության գնահատման արդյունքում մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում արձանագրելիս: Հակառակ դեպքում, ներպետական և վերպետական մարմինների դատական ակտերի միջև տարբերակված մոտեցման դրսևորումը չի ունենա օբյեկտիվ հիմք և չի հետապնդի իրավաչափ նպատակ: Հետևաբար, իր գործունեությունն իրականացնելիս դատավորը չպետք է կաշկանդված լինի իր կողմից կայացրած դատական ակտի հիման վրա ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային դատարանների կամ քվազի-դատական ֆունկցիա ունեցող մարմինների կողմից իրավունքի խախտում արձանագրելու հանգամանքով:

46. Վերոգրյալի հետ մեկտեղ, ներպետական կարգավորման իրավական անորոշության առումով հարկ է նաև նկատել, որ կարգավորմամբ

¹⁹ St'u CDL-AD(2014)006, Joint Opinion on the draft Law on disciplinary liability of Judges of the Republic of Moldova, §18:

հստակեցված չէ, թե ինչու՞ է օրենսդիրն ընտրել միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված դատական ակտերը, արդյունքում դուրս թողնելով միջազգային այլ կոնվենցիաների շրջանակներում գործող մարմինների (օրինակ, ի թիվս այլնի, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի) կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում արձանագրող ակտերը:

47. Բացի այդ, հստակեցված չէ, թե արդյո՞ք կարգապահական վարույթ պետք է հարուցվի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ միակողմանի հայտարարությունը կամ բարեկամական կարգավորումը հաստատելու վերաբերյալ որոշման հիման վրա, երբ միջազգային դատարանն ընդամենն ի գիտություն է ընդունում ներպետական մակարդակում թույլ տրված իրավունքի կամ ազատությունների խախտումները: Նշված հարցի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև նշված որոշումները բովանդակային առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռին համարժեք՝ անձի իրավունքների կամ ազատությունների խախտման հիմնավորումներ չեն պարունակում, սակայն ներպետական օրենսդրության համաձայն՝ հիմք են հանդիսանում իրավունքի խախտման հիմքով անձի վերաբերյալ կայացված ներպետական դատական ակտերը վերանայելու և գործերը վերաբացելու համար²⁰:

48. Միաժամանակ, հարկ է նկատել, որ ինչպես հետևում է Վենետիկի հանձնաժողովի կարծիքից, խնդրո առարկա կարգապահական վարույթի հարուցման առիթն ամրագրող օրինագիծը պատրաստվել է «դատավորների վեթինգի» կառավարության օրակարգի շրջանակներում,²¹ սակայն,

²⁰ Տե՛ս, ի թիվս այլ օրենսգրքերի, օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

²¹ Տե՛ս CDL-AD(2022)002 Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate General of Human Rights and the Rule of Law (DGI) of the Council of Europe on the Draft Laws on Making

միջազգային չափորոշիչների տեսանկյունից, անցումային արդարադատությանը բնորոշ այս գործիքը ենթադրում է դրա օգտագործում բացառապես բոլոր դատավորների հավասարության, իրավունքի գերակայությունը երաշխավորող ծանրակշիռ իրավական երաշխիքների, համակարգային և կանոնակարգված ընթացակարգի, հստակ ժամկետային սահմանափակումների պայմաններում²²: Պետք է նկատի ունենալ, որ նշված իրավական երաշխիքների շրջանցմամբ, խիստ երկար կամ նույնիսկ առանց ժամկետների, կանոնակարգված ընթացակարգերի և համակարգային մոտեցման, դատավորների հավասարության և իրավունքի գերակայության երաշխավորման, քողարկված ձևով վեթինգի իրականացումը *prima facie* անհամաչափ միջամտություն է դատավորների հիմնարար իրավունքների, նրանց սահմանադրական երաշխիքների նկատմամբ:

49. Նման խնդրահարույց հարցերի պայմաններում, հաշվի առնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի հիման վրա դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հաջողված միջազգային փորձի բացակայությունը, պետք է արձանագրել, որ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, փոխկապակցված նույն օրենքի 144-րդ հոդվածի 1.1-ին մասի հետ, իր անորոշությամբ խնդրահարույց է, վտանգի տակ է դնում դատավորների անկախության, անփոփոխելիության և գործառությանին անձեռնմխելիության ապահովման՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված հանրաճանաչ երաշխիքները:

Amendments to the Constitutional Law on the Judicial Code and to the Constitutional Law on the Constitutional Court, §14.

²² Տե՛ս, ի թիվս այլնի, CDL-PI(2022)051 - Compilation of Venice Commission Opinions and Reports Concerning Vetting of Judges And Prosecutors, European Commission for Democracy through Law of the Council of Europe (“Venice Commission”), 19 December 2022,

Ե) Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման առիթի կանխատեսելիության երաշխիքի և այն ամրագրող օրենքը հետադարձ ուժով կիրառելու հնարավորության միջազգային չափորոշիչները.

50. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Oleksandr Volkov v. Ukraine* գործով արձանագրել է Ուկրաինայի Գերագույն դատարանի նախկին դատավոր Վոլկովի՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածների խախտում՝ ընդգծելով, որ երդումը խախտելու համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը չի համապատասխանել կանխատեսելիության և իրավական որոշակիության պահանջներին՝ չպարունակելով իրավական երաշխիքներ կամայականության դեմ²³:

51. Մասնավորապես, նշված գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադառնալով այն փաստարկին, որ երդումը խախտելու համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի չի ներառել համապատասխան վաղեմության ժամկետ, փաստել է, որ «թեև դատարանը նպատակահարմար չի գտնում նշել, թե որքան պետք է լինի վաղեմության ժամկետը, այն գտնում է, որ կարգապահական վարույթների նկատմամբ նման անժամկետ մոտեցումը լուրջ սպառնալիք է ստեղծում իրավական որոշակիության սկզբունքի համար»²⁴:

52. Վենետիկի հանձնաժողովը մշտապես իրավական դիրքորոշումներ է հայտնել այն մասին, որ կարգապահական տույժ հարուցող վարքագիծը պետք է սահմանվի բավարար հստակությամբ, որպեսզի շահագրգիռ անձին

²³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Oleksandr Volkov v. Ukraine* գործով 2013 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 21722/11, §§179-186:

²⁴ *Ibid* § 139:

հնարավորություն ընձեռվի կանխատեսել իր գործողությունների հետևանքները և ըստ այդմ համապատասխանեցնել իր վարքը²⁵:

53. Ավելին, Վենետիկի հանձնաժողովը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի կանխատեսելիության վերաբերյալ հստակ դիրքորոշումներ է արտահայտել նաև հենց «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-333-Ն ՀՀ սահմանադրական օրենքի նախագիծն ուսումնասիրելիս: Մասնավորապես, հղում կատարելով իր նախկինում տրված կարծիքին՝ դատավորների համար, ի թիվս այլնի, նվերներ ընդունելու սահմանափակումների նոր վարքագծի կանոններ սահմանելու մասով, երբ առաջարկել էր ավելացնել այդ կանոնները հետադարձ ուժով կիրառելու արգելք²⁶, խնդրո առարկա օրենքի նախագիծն ուսումնասիրելիս կրկին ուշադրություն է հրավիրել այդ հանգամանքին՝ նշելով, որ *«հետադարձ ուժի հարցը պետք է ընդհանրապես բացառվի՝ ապահովելու համար, որ այն չստեղծի հետագա հնարավոր մարտահրավերներ հայկական պետության դեմ ՄԻԵԴ-ի առջև: Թեև խստորեն չխոսելով եվրոպական չափանիշների խախտման մասին, [կարգավորումը] պետք է ապացուցի «ընդհանուր շահի անհերքելի հիմքերի» կամ «հանրային շահի նկատառումների» առկայությունը և բավարարի կանխատեսելիության պահանջին»²⁷:*

²⁵ Տե՛ս CDL-AD(2014)006, Joint Opinion on the draft Law on disciplinary liability of Judges of the Republic of Moldova, §16:

²⁶ Venice Commission, CDL-AD(2019)024, Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI), on the amendments to the Judicial Code and some other Laws, §41:

²⁷ Venice Commission, CDL-AD(2022)002, Armenia - Joint Opinion of the Venice Commission and the Directorate of Human Rights (DHR) of the Directorate General of Human Rights and Rule of Law (DGI), on the Draft Laws on Making Amendments to the Constitutional Law on the Judicial Code and to the Constitutional Law of the Constitutional Court, §41:

2) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիման վրա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթի կիրառելիությունը հետադարձ ուժով (ex post facto).

54. Ինչպես ցույց է տալիս «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-333-Ն ՀՀ սահմանադրական օրենքի հիմնավորումների ուսումնասիրությունը²⁸, օրենսդիրը նշված օրենքի կիրառելիության հնարավորությունը քննարկել է հետադարձության տեսանկյունից և արդարացնելով այդպիսի մոտեցումն ընդգծել է, որ *«հետադարձության արգելքի պահանջը խստորեն պահպանելը վերաբերում է քրեական օրենքին, մինչդեռ պրակտիկան ցույց է տալիս, որ իրավունքի մնացած ճյուղերը չեն բացառում այդ արգելքի շրջանցումը՝ պայմանավորված որոշակի հանգամանքներով: Հիմնականում նման անհրաժեշտություն է առաջանում պետական քաղաքականության իրավաչափ նպատակներից ելնելով»:* Միաժամանակ, որպես այսպիսի մոտեցման հիմնավորում՝ հղում է կատարվել Բրիտանական, Ամերիկյան, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայից վերցված առանձին գործերի:

55. Սույն գործի փաստական հանգամանքների և մասնավորապես ընդունված օրենքի բովանդակության համատեքստում, նշված հիմնավորումների վերաբերելիությունը և կիրառելիությունը լրացուցիչ գնահատման կարիք ունի՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված աղբյուրներից և ոչ մեկն ուղղակիորեն չի վերաբերում դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթը հետադարձ ուժով կիրառելու իրավաչափության հարցին:

²⁸ Տես հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draftreading_docs8/K-252_DR2.pdf, վերջին այց՝ 22 ապրիլի 2024թ.:

56. Այսպես, թեև ինքնին «պետական քաղաքականության իրավաչափ նպատակների» խիստ ընդհանրական ձևակերպման ներքո օրենքի հետադարձ ուժով կիրառելիության հիմնավորումը մտահոգիչ է, պետք է նաև հաշվի առնել, որ տվյալ դեպքում, օրենսդիրը նշված ձևակերպումն օգտագործելիս հղում է կատարել Ուտրեխտի համալսարանի իրավունքի ամսագրում լույս տեսած հոդվածին, որում հեղինակներն ընդամենը առաջարկել են այդպիսի մոտեցումը հիմք ընդունել *վարչական կարգավորումները հետադարձ կարգով կիրառելիս*: Ընդ որում, նշված մոտեցումն արտահայտելիս հոդվածի հեղինակներն ընդգծել են, որ այն կիրառելիս պետք է հաշվի առնել կոնկրետ դեպքում կիրառելի միջազգային և ներպետական իրավական կարգավորումները: Ավելին, նրանք նույնիսկ ընդունել են, որ այդպիսի մոտեցման շուրջ բացակայում է միջազգայնորեն ընդունված կոնսենսուս²⁹: Նման պայմաններում, ակադեմիական աղբյուրից վերցված, հայեցակարգային բնույթի տեսական գաղափարը, չի կարող որպես միջազգայնորեն ընդունված փաստարկ վկայակոչվել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթը հետադարձ ուժով կիրառելու իրավաչափությունը հիմնավորելիս:

57. Ինչ վերաբերում է դատական պրակտիկայից վերցված օրինակներին, ապա դրանք մի դեպքում վերաբերում են հարկային արտոնությունները սահմանափակելու «արտասովոր դեպքի», ինչպես նշված է բրիտանական վերաքննիչ դատարանի դատական ակտում³⁰, մեկ այլ դեպքում՝ կենսաթոշակային պլանի դադարեցման ապահովագրական ծրագրին, ինչպես նշված է համապատասխան ամերիկյան դատական ակտում³¹:

²⁹ Yarik Kryvoi and Shaun Matos, “Non-Retroactivity as a General Principle of Law,” (2021) 17(1) Utrecht Law Review, 51:

³⁰ Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.bailii.org/ew/cases/EWCA/Civ/2011/893.html>, վերջին այց՝ 22 ապրիլի 2024թ.:

³¹ Տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.law.cornell.edu/supremecourt/text/467/717>, վերջին այց՝ 22 ապրիլի 2024թ.:

Այսինքն՝ պետք է արձանագրել, որ նշված աղբյուրները վերաբերում են բոլորովին այլ կարգավորման առարկա ունեցող իրավահարաբերությունների և ինքնին չեն կարող կիրառվել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթը հետադարձ ուժով կիրառելու հնարավորությունն արդարացնելու համար:

58. Անդրադառնալով նաև օրենքի հիմնավորումներում նշված՝ *Xhoxhaj v Albania* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճռում արտահայտված իրավական դիրքորոշումների, պետք է արձանագրել, որ այդ գործով արտահայտված պնդումները վերաբերում են անցումային արդարատության՝ վեթինգի շրջանակներում, դատավորների անձնական և ընտանեկան ունեցվածքի գնահատման գործընթացին³²: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց, տվյալ դեպքում վիճարկվող օրենքը չի մշակվել հատուկ ընթացակարգով, վեթինգի իրականացման շրջանակներում, Վենետիկի հանձնաժողովի կողմից նշված իրավական երաշխիքներին համապատասխան ձևով: Այս առումով, կարևոր է վկայակոչել նաև այն, որ հենց Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Xhoxhaj v Albania* գործով վճռում, տարբերակել է վեթինգի շրջանակներում իրականացվող հատուկ ընթացակարգով քննարկվող հարցերն ընդհանուր կարգով իրականացող ընթացակարգով քննվող կարգապահական պատասխանատվության հարցերից³³:

59. Բացի այդ, հարկ է նկատել, որ տվյալ գործի փաստական հանգամանքները վերաբերում էին դատավորների ամբողջ կյանքի ընթացքում կուտակված գույքի ծագման աղբյուրի ստուգման վաղեմության ժամկետների կիրառման հարցին, այլ ոչ թե հստակ ժամկետային սահմանափակումներ և իրավական որոշակիություն պահանջող՝ միջազգային դատարանի դատական ակտի

³² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Xhoxhaj v Albania* գործով 2021 թվականի փետրվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 15227/19:

³³ *Ibid* § 349:

հիման վրա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգին:

60. Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ թեև ի տարբերություն նյութափրավական բնույթի նորմերի, որոնց դեպքում դրանք հետադարձ ուժով կիրառելու հնարավորություններն առավել խիստ են, դատավարական (վարության) բնույթի նորմերը, ինչպիսիք կարող են ըստ էության դիտարկվել նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգային նորմերը, հետադարձ ուժով կիրառելու առումով ունեն որոշակի ճկունություն, սակայն այդպիսի կիրառելիությունը սահմանափակված է անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության շրջանակով: Այսպես, բոլոր դեպքերում անձի իրավունքները սահմանափակող, նրա իրավական վիճակը վատթարացնող, նրա նկատմամբ բացասական հետևանքներ առաջացնող դրույթները հետադարձ ուժով չեն կարող կիրառվել նույնիսկ դատավարությունում, որպիսի հանգամանքն ունի առանցքային նշանակություն նաև դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման առիթին վերաբերող դրույթները հետադարձ ուժով կիրառելու հնարավորության հարցը քննարկելիս և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելիս:

61. Վերոգրյալի հետ մեկտեղ, պետք է նկատի ունենալ, որ սույն գործով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի (նյութափրավական բնույթ կրող) հայտնաբերման համար նախատեսված ժամկետը կիրառվել է կարգապահական վարույթի հարուցման առիթների (դատավարական բնույթ կրող) համար նախատեսված ժամկետների նկատմամբ: Մինչդեռ, նկատի ունենալով Սահմանադրական դատարանի այն դիրքորոշումը, որ «Սահմանադրությամբ՝ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով

գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից³⁴, խնդրո առարկա դիմումի համատեքստում, պետք է հաշվի առնել, որ թիվ ՀՕ-333-Ն ՀՀ օրենքն ընդունելուց հետո շարունակել է իրավական գործողության մեջ գտնվել «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-197-Ն ՀՀ սահմանադրական օրենքի անցումային դրույթների 19-րդ կետը՝ ամրագրող, որ նախատեսված առիթով կարգապահական վարույթ կարող է հարուցվել Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կայացրած ակտերի հիման վրա: Նշված օրենսդրական կարգավորմամբ, հաշվի առնելով նաև թիվ ՀՕ-333-Ն օրենքի անցումային դրույթների 2-րդ կետը, հենց օրենսդրի կողմից է բացառվել կարգապահական պատասխանատվության վարույթ հարուցելու առիթը հետադարձ ուժով՝ մինչ այդ կայացված միջազգային դատարանի դատական ակտերի նկատմամբ կիրառելու հնարավորությունը:

62. Հետևապես, իրավակիրառ պրակտիկան նույնպես պետք է առաջնորդվի վերոնշյալ մոտեցմամբ՝ փարատելու համար այն նույն մտահոգությունները, որոնք մատնանշվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ Ուկրաինայի Գերագույն դատարանի նախկին դատավոր Վոլկովի գործով, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից մի շարք կարծիքներում, այդ թվում՝ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում նախատեսվող փոփոխությունների շրջանակներում:

V. Եզրահանգումներ

63. Այսպիսով, սույն մասնագիտական կարծիքում ներկայացվել են Դիմողի ներկայացուցչի սահմանադրական դիմումում բարձրացված հարցերին

³⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԴԴ-1000 որոշումը, կետ 5:

առնչվող միջազգային չափորոշիչները և վերլուծվել դրանք՝ խնդրո առարկա «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարված օրենսդրական փոփոխությունների և լրացումների համատեքստում: Որպես կարծիքի ամփոփում, կառանձնացնեմ հետևյալ երեք հիմնական եզրահանգումները.

- 1) Անցումային արդարադատության և դրան բնորոշ՝ դատավորների վեթիքի իրականացման հատուկ ընթացակարգի դրսևորումները չեն կարող մեխանիկորեն կիրառվել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընդհանուր հիմունքներով իրականացվող ընթացակարգի նկատմամբ: Նշվածը պետք է հաշվի առնվի ինչպես օրենսդրական կարգավորումների, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունների համատեքստում: Հակառակ պարագայում, կխախտվեն դատավորների՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված հիմնարար երաշխիքները:
- 2) Սույն կարծիքում բարձրացված խնդրահարույց հարցերի պայմաններում, հաշվի առնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի հիման վրա դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջազգային փորձը, պետք է արձանագրել, որ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, փոխկապակցված նույն օրենքի 144-րդ հոդվածի 1.1-ին մասի հետ, իր անորոշությամբ խնդրահարույց է, վտանգի տակ է դնում դատավորների անկախության, անփոփոխելիության և գործառության անձեռնմխելիության ապահովման՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված հանրաճանաչ երաշխիքները:
- 3) Թեև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգային դրույթներն ունեն դատավարական (վարության) բնույթ, սակայն դրանք չպետք է հետադարձ ուժով (ex post

facto) այնպես կիրառվեն, որ հանգեցնեն դատավորների իրավական վիճակի վատթարացման, բացասական հետևանքներ առաջացնեն նրանց համար: Հետևաբար, անձի դատավոր նշանակվելու պահից հետո ընդունված իրավական ակտերով իր վիճակը վատթարացնող կարգապահական վարույթի հարուցման առիթի նախատեսումը կամ դրա կիրառման վաղեմության ժամկետի այնպիսի մեկնաբանումը, որը կարող է վատթարացնել վերջինիս վիճակը, ոչ միայն խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության պահանջներից, այլ նաև տվյալ դեպքում որոշակի հակասության մեջ է գտնվում խնդրո առարկա ՀՕ-197-Ն և ՀՕ-333-Ն օրենքների անցումային դրույթների համեմատական վերլուծության հետ:

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչ՝

ի.գ.թ. Առնոլդ Վարդանյան